

ARMENIAN
HOLY APOSTOLIC CHURCH

MONTREAL
5242 Park Ave.

PARISH COUNCIL



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻ
ՄՈՆՏՐԵԱԼ

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մոնթրեալ, 14 Ապրիլ 1967

թիվ 5

Քերշ. Տ. Թորգոմ Եպիս. Մանուկեան
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Հայոց
ՆԻԻ ԵՈՐՔ

Սրբազան Հայր,

Ներկայ գրութեամբս հաճոյքն ունիմ Ձերդ Սրբազնութեան խոնարհաբար հաղորդելու ծխական տարեկան ընտրութեան արդիւնքը, որ տեղի ունեցաւ Կիրակի 5 Մարտին, 1967:

Այսու կը փութամ Ձերդ Սրբազնութեան ուշադրութեան յանձնել, թէ ընտրողական Յանձնախումբս, հակառակ իր թափած ջանքերուն, կարելիութիւնը չէր ունեցած գտնել թեկնածուներու անուններ, ներկայացնելու համար երկ պատիկ ցանկը :

Ուստի վիճակաւ դադրած երեք անդամներու տեղ միաձայնութեամբ, բոլոր ներկաներու առանց բացառութեան, ձեռնբաց քուէներով ընտրուեցան Տիարք Ղազար Պալթաճեան, Ալպէր Մարտիկեան եւ Վարդգէս Պարոն :

Ըստ թեմիս կանոնադրութեան 27րդ յօդուածին, վերոյիշեալներու վաւերացումը կը յանձնեմ Ձերդ Սրբազնութեան եւ Թեմական Խորհուրդիս վաւերացման :

Հաճեցէ՞ք ներփակ գտնել,

1. - Ծխական ժողովին ներկայացուած տարեկան հաշուեկշիռը :
2. - Տպագրեալ հարցարանը Եկեղեցւոյ Կազմակերպութեանց գործունէութեան մասին :
3. - Հովիւին տուած տեղեկագիրը Ծխական ժողովին :
4. - Ծխական Խորհուրդի տարեկան տեղեկագիրը տրուած Ծխական ժողովին :

Մատչելով ի համբոյր Ձերդ Սրբազնութեան Ս. Աջոյն եւ որդիական յարգանքով,

Վազգէն Վրդ. Թադոյեան

Վազգէն Վրդ. Թադոյեան
Հովիւ եւ նախագահ Ծխական Խորհուրդի